

ԴԱՆԻԷԼ ԱԲ.—Մր. ՄՁ. Թ. 503 շարականին յիշատակարանին մէջ կը յիշատակուի Դանիէլ ար. իբր Լս. Ս. Յարութեան: Ան կը յիշատակուի նաեւ Գրիգոր վրդ. Դարանաղցիէն «... յաղագս որոյ եւ նուաստս բանասիրաց եւ տրուպս ամենայն վարդապետաց՝ Գրիգորս Դարանաղցցի հարկեցոյ ի Դանիէլ եղբօրէս այս եւ զրեցիլ զայս տեսրս. որ պակասեալ կայր ի գրոցս. յիշատակ մեզ եւ իւրն եւ մեր ծնողացն. եւ ամենայն արեան մերձաւորացն. ամէն: Արդ նորոգեցաւ գիրքս ի թ՛վին հայոց ՌկՁ (=1617) սեպտ. ԻԴ. ի մէջ Ս. Յարութեանս, ի յառաջնորդութեանն Գրիգոր սրբազան եպիսկոպոսին, եւ որք ընթեռնուք զյիշատակ գրոցս, յիշեալիք յաղթս զբազմամեզ Գրիգորս եւ զՏէր Դանիէլ արեղայս, որ ինն տարի յուսարար է. ընդ նմին եւ զՄարկոս միայնակեացս, որ սպասուոր է Ս. Յարութեանս, եւ որք յիշէք յիշեալ, ելլն. (Դարանաղցի. էջ 600). նոյն Դարանաղցիին ձեռագիր Աստուածաշունչին Եսայիայ մարգարէութեան վերջը գրուած յիշատակարանին մէջ եւս կը յիշուի Դանիէլ ար. ն. «... Արդ՝ գրեցաւ սա ի սուրբ Յարութեանս. յանգիման Գերեզմանին, եւ յուսարար մեր բաժին մասին սրբասէր եւ մաքրամիտ Տէր Դանիէլ կրօնաւոր քահանային...»: (Անդ. էջ 605):

ԴԱՆԻԷԼ ԵՊՍ.— Գրիգոր վրդ. Դարանաղցիին հետ 1616ին ուխտաւորութեամբ Ս. Յակոբի վանքը կ'այցելէ կրկին անգամ եւ կը մեկնի յետոյ Կիպրոս կղզին. Դարանաղցին կը գրէ. «... կըրկին գնացաք յԵրուսաղէմ եւ երկու Ձատիկ այլ կացաք անդ հինգ մարդով. որ մինն այս Դանիէլ եպո. ն էր, եւ տէր Գասպարն եւ Սարգիս վրդ. ն եւ նոր միակեացն որ տնտես մեզ. որ այժմ առ Աստուած է փոխեալ յԵրուսաղէմ. (Դարանաղցի. էջ 183): Դանիէլ եպո. ի նկարագրի մասին ալ կը գրէ. «... ահա եօթնևտասն ամ է, որ հետ մեզ է եւ գրոց ընթերցմամբ սրտապեալ, երկու ամ յԵրուսաղէմ գնացաք եւ մի ամ ի Կիպրոս կղզւոյ անապատին կացաք, եւ անտի յետ՝ այս քանի ամ է որ ի գրոց ծառայութիւն